# ՄԱՍ III
## ԷԼԵԿՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ԳՆՄԱՆ ԸԹՆԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Թույլատրելի դիտարկիչով բացել https://eauction.armeps.am/ կայք էջը
Մուտքագրել armeps.am կայք-էջում գրանցված օգտվողի ճշգրիտ մուտքանունը «Օգտանուն» դաշտում և ճշգրիտ գաղտնաբառը «Գաղտնաբառ» դաշտում: Սեղմել «Մուտք» կոճակը:
Համակարգ մուտք գործելիս «մուտքանուն» դաշտն անհրաժեշտ է նշել փոքրատառերով:
eauction.armeps.am կայք-էջում մուտքի անհաջող փորձերը չեն ապաակտիվացնում armeps.am կայք-էջի օգտվողի հաշիվը, սակայն armeps.am կայք-էջում ապաակտիվացած օգտվողը չի կարող մուտք գործել eauction.armeps.am կայք-էջ:






Բացված պատուհանում երևում են այն դաշտերը, որոնք անհրաժեշտ են աշխատանքի համար՝ ըստ Ձեր արտոնությունների:
Գլխավոր էջում արտացոլվում են նաև Ձեր ծանուցումները, որոնց ծանոթանալու համար անհրաժեշտ է սեղմել համապատասխան հղման վրա




Միջերեսի լեզուն փոխելու համար անհրաժեշտ է սեղմել համապատասխան լեզվի կոճակը:

Այս էջում մասնակիցը ստուգում և խմբագրում է կազմակերպության տվյալները






Իմ տվյալները

| | | | |
|---|---|---|---|
| Կազմակերպություն | Testyan LLC | Тестяан ООО | Տեստային ՍՊԸ |
| Հասցե | Ղալար 777/999 | Ղալար 777/999 | Ղալար 77 |
| Տնօրեն | Ղալար Ղալարիկյան | Ղալար Ղալարիկյան | Ղալար Ղալարիկյան |
| Օգտատեր | Test firstname | Тест имя | Տեստ անուն |
| | Test lastname | Тест фамимя | Տեստ ազգանուն |
| Բանկ | Ղալար բանկ | Ղալար բանկ | Ղալար բանկ |
| Հ.Վ.Հ.Հ. | 123789456 | | |
| Հեռախոս | 011 011 011 | | |
| Հաշիվը | 555 | | |
| Երկիր | Հայաստանի Հանրապետություն | | |
| Կարգավիճակ | Ակտիվ | | |

Պահել

«Բաժանորդագրության կառավարում» էջը թույլ է տալիս մասնակցին կառավարել CPV կոդերին իր բաժանորդագրությունը *




* Ցույց են տրվում միայն միայն այն CPV կոդերը, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ՝ որպես էլ. հակադարձ աճուրդով գնման ենթակա առարկաներ

Տողի սկզբի «v» նշումը ցույց է տալիս, որ Դուք արդեն բաժանորդագրված եք այդ CPV կոդին: Նոր կոդերի բաժանորդագրվելու համար պարզապես պետք է համապատասխան կոդի տողում ավելացնել նշում:
Երկրորդ, երրորդ և այլ մակարդակի կոդերը տեսնելու համար պետք է սեղմել
«+» նշանը:
Բաժանորդագրության ավարտին պետք է էջի ներքևի աջ անկյունում սեղմել «Պահել» կոճակը



«Մրցույթ» էջում մասնակիցը կարող է տեսնել բոլոր մրցույթները



«Դիմելու կարգավիճակ» սյունակն օգնում է կողմնորոշվել, թե որ մրցույթին եք Դուք արդեն դիմել: Մասնակիցը կարող է դիմել «Հրապարակված» կարգավիճակ ունեցող մրցույթներին՝ մուտք գործելով վերջիններիս մանրամասների էջ:




| Հ/հ | Ծածկագիր | Վերնագիր | Չափաբաժինների քանակ | Կարգավիճակ | Դիմելու կարգավիճակ | |
|---|---|---|---|---|---|---|
| 15 | ԱԹ-ԷԼԱՃ/2017 | Աճուրդ Թեստ 2 | 9 | Հրապարակված | Չդիմած | > |
| 14 | Թ-10/2017 | Թեստ 10 | 49 | Հրապարակված | Չդիմած | > |
| 11 | Աճուրդ սովորական | Աճուրդ սովորական | 70 | Որակավորում | Դիմած | > |
| 4 | ԴԱՀԿ-ԳՀԱՊԶԲ-41/12/17 | Էլեկտրոնային աճուրդի փորձնական ՄՀ - 21 12 2017 | 4 | Հրապարակված | Չդիմած | > |
| 3 | Թեստ23.12.2017 | Թեստ23.12.2017 | 112 | Որակավորում | Դիմած | > |

Մրցույթի մանրամասների էջում արտացոլվում է դրա մասին ողջ տեղեկատվությունը: Սեղմելով «Հրավեր» տողի «Բեռնել» կոճակը կարելի է ներբեռնել և ծանոթանալ մրցույթի հայտարարությանն ու հրավերին:

**Մրցույթի մանրամասներ***

Ուղարկել հարցում | Դիմել | Ցանկ

| | |
|---|---|
| Ծածկագիր | ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-41/12/17 |
| Վերնագիր | Էլեկտրոնային աճուրդի փորձնական ՄՀ - 21 12 2017 |
| Գնորդ | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| Գնման տեսակ | goods |
| Փոխարժեք | USD 100 RUR 200 EUR 300 |
| Պատասխաններ և պարզաբանումներ | Հարցում / Ժամանակ / Պատասխան / Պարզաբանում / Պասիվ |
| Հրապարակման ժամանակ | 2017-12-25 01:12:53 |
| Հայտերի ընդունման վերջնաժամկետ | 2018-01-02 11:00:00 |
| Հակադարձ աճուրդ | 2018-01-04 11:00:00 |
| Դուք կարող եք ուղարկել հարցում նախքան | 2017-12-31 11:00:00 |
| Հրավեր | Բեռնել |
| Արձանագրություն | |
| Կարգավիճակ | Հրապարակված |

Մրցույթի մանրամասների էջի ներքևի հատվածում արտացոլվում են տվյալ մրցույթի չափաբաժինները

| Համար | cpv | Վերնագիր | քանակ | Տեխնիկական առաջարկ |
|---|---|---|---|---|
| 1 | 33651188/2 | արմենիկում | 10 | Բնութագիր 1 |
| 2 | 33651188/2 | Նարինջ | 30 | Բնութագիր 2 |

Activate Windows
Go to Settings to activate Windows.

Մրցույթի վերաբերյալ հարցում ուղարկելու համար անհրաժեշտ է մանրամասների էջի վերին աջ անկյունում սեղմել «Ուղարկել հարցում» * կոճակը և բացված էջի «Հարցում» տողում մուտքագրել հարցման տեքստը և սղմել «Հաստատում» ստեղնը:

Ավելացնել Հարցում

Մանրամասներ

| | |
|---|---|
| Ծածկագիր | ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-41/12/17 |
| Մրցույթ | Էլեկտրոնային աճուրդի փորձնական ՄՀ - 21 12 2017 |
| Սեկնարկ | 2018-01-02 11:00:00 |
| Հարցում | |

Հարցում

* Դուք կարող եք սեղմել ուղարկել հարցում միայն մինչև մանրամասների էջի համապատասխան տողում նշված ժամկետի լրանալը

Ուղարկված հարցումների պատասխանները ցույց են տրվում մրցույթի մանրամասների էջի «Պատասխաններ և պարզաբանումներ» աղյուսակում:

Եթե մրցույթի քարտուղարը պատասխանել է Ձեր հարցմանը, ապա այդ պատասխանը արտացոլվում է միայն Ձեր էջի «Պատասխան» սյունակում: Մյուս մասնակիցներին այն հասանելի չէ

Պատասխաններ և պարզաբանումներ

| Հարցում | Ժամանակ | Պատասխան | Պարզաբանում | Պասիվ |
|---|---|---|---|---|
| Հարցում | 2017-12-21 23:24:41 | | Պարզաբանում | |
| Հարցում 1 | 2017-12-22 02:08:23 | | | Ձեր հարցումը չի առնչվում տվյալ ընթացակարգին |
| Հարցում 2 | 2017-12-22 02:13:37 | | Պարզաբանում 1 | |
| Հարցում 3 | 2017-12-22 02:37:15 | Պատասխան | | |

Մերժված հարցումները ևս հասանելի են միայն Ձեզ: Մերժման մեկնաբանությունը արտացոլվում է «Պասիվ» սյունակում: Մրցույթի քարտուղարի տված պարզաբանումներն արտացոլվում են համապատասխան սյունակում: Ընդ որում պարզաբանումները հասանելի են տվյալ մրցույթի CPV-ներին բաժանորդագրված մասնակիցներին, եթե նույնիսկ նրանք որևէ հարցում չեն ուղարկել:

Մրցույթին դիմելու համար պետք է մանրամասների էջում սեղմել համապատասխան կոճակը:
Նախ անհրաժեշտ է «Ավելացնել չափաբաժին» էջում ընտրել մրցույթի այն չափաբաժինները, որոնց պատրաստվում եք դիմել




Միանգամից բոլոր չափաբաժինները նշելու համար սեղմեք «Ընտրել բոլորը» կոճակը:
Նշումները մաքրելու համար օգտվեք «Ապընտրել բոլորը» կոճակից:
Փուլն ավարտելու համար սեղմեք «Պահել» կոճակը, ինչից հետո ինքնաշխատ եղանակով անցում կկատարեք հաջորդ փուլ

«Ավելացնել Հավաստում» էջում մասնակիցն ամբողջականացնում է իր վավերապայմանները, ինչի արդյունքում կարող է համակարգի միջոցով ստանալ մրցույթի Դիմում-Հայտարարություն ուղարկելու հնարավորություն



* Եթե ցանկանում եք մրցույթին դիմելու գործընթացը շարունակել ավելի ուշ, ապա կարող եք սեղմել «Մանրամասներ» կոճակը: Այս պարագայում մրցույթի մանրամասների էջի «Դիմել» կոճակը սեղմելիս՝ համակարգը կուղղորդի դեպի այն փուլ, որից պետք է շարունակեք դիմելու գործընթացը:

Բոլոր դաշտերը լրացնելուց հետո պետք է սեղմել «Ֆայլ» կոճակը: Համակարգն ինքնաշխատ եղանակով կգեներացնի և դիտարկիչի էջում կբացի Ձեր «Դիմում-Հայտարարությունը»,




Դիմում հայտարարությունը ստորագրելուց* հետո մասնակիցը այն կցում է ստորագրված փաստաթղթերը մնացած փաստաթղթերի հետ** մեկտեղ և սեղմում «Պահել» կոճակը:

** Բոլոր փաստաթղթերը մասնակիցը կցում է այս փուլի ընթուցքում ներառյալ Որակավորման փաստաթղթերը:

Մասնակցության դիմումի ներկայացումից հետո համակարգը Ձեզ տրամադրում է եզակի ծածկագիր (PIN-կոդ)՝ համակարգում հրավերով սահմանված ընթացակարգի հետ կապված հետագա գործողություններ կատարելու համար առցանց հակադարձ աճուրդի համար: Ընդ որում, ծածկագիրը Ձեր գրանցահաշվում երևում է մեկ անգամ: Դուք պետք է պահպանեք ծածկագիրը և պատասխանատու եք դրա անվտանգության ու գաղտնիության, ինչպես նաև՝ դրանով համակարգում ցանկացած գործողության համար:




Ծածկագիրն անվտանգ տեղում պահպանելուց հետո պետք է սեղմել «անցնել հաջորդ փուլ» կոճակը

Որից հետո համակարգը մասնակցին ուղղորդում է «Գնառաջարկի կառավարում»
Էջ որտեղ մասնակիցը պետք է լրացնի գնային առաջարկ ընտրված չափաբաժինների համար ընդ որում գնային առաջարկում նշվում է մեկ ընդհանուր գին ամբողջ քանակի համար ըստ չափաբաժինների:




Գնառաջարկի կառավարում դաշտում անհրաշետ տվյալնելները լրացվում են հետևյալ տրամաբանությամբ
: Ըստ գնման պահանջի ապրանքի գնման դեպքում տվյալ էջում կարող են ցուցադրվել «մակնիշ», «արտադրողի անվանում», «ֆիրմայի անվանում», «ապրանքային նշան» դաշտերը, որոնք պարտադիր մուտքագրման դաշտեր են (հայերեն և/կամ ռուսերեն):
«տեխնիկական բնութագիր» դաշտը պարտադիր մուտքագրման դաշտ է (հայերեն և/կամ ռուսերեն):

Նախընտրած գինը լրացվում է «Արժեք» դաշտում, լրացնում է ԱԱՀ-ի չափը «Ա.Ա.Հ» դաշտում (ԱԱՀ չունենալու դեպքում պարտադիր լրացնել 0) և սեղմում
«Հաշվարկել» կոճակը, իսկ «Գին» դաշտը լրացվում է ավտոմատ կերպով:
Եթե հրավերով նախատեսված է «Մակնիշը»,«Արտադրողի անվանում»,«Ֆիրմայի անվանումը»
«Ապրանքային նշան» դաշտերի ներմուծումը ապա մասնակիցը պարտադիր կերպով լրացնում է այդ դաշտերը որևէ լեզվով,
ընդ որում երկու լեզուներով ներմուծումը պարտադիր չէ:

Նշված գործողությունը բոլոր չափաբաժինների համար անելուց հետո Մասնակիցը սեղմում է «Պահել» կոճակը
Որից հետո համակարգը ստուգիչ հարցնում է մասնակցին
«Դուք վստահ ե՞ք որ գնային առաջարկը ներկայացրել եք ընդհանուր քանակի համար»




«Այո» կոճակի սեղմումից հետո համակարգը ընդունում է գնառաջարկը և ուղղորդում հաջորդ փուլ, «ոչ»-ի դեպքում նա կարող է վերանայել:
Դուք կարող եք օրենքով սահմանված կարգով ետ կանչել Ձեր հայտը:
Համապատասխան էջին անցնելու համար պետք է մանրամասների էջում սեղմել «Չեղարկել» կոճակը:

Մրցույթի մանրամասներ*

Չեղարկել | Ցանկ

| | |
|---|---|
| Ծածկագիր | Ծածկագիր: Էլեկտրոնային աճուրդի փորձնական ՄՀ - 21 12 2017 |
| Վերնագիր | Էլեկտրոնային աճուրդի փորձնական ՄՀ - 21 12 2017 |
| Գնորդ | ՀՀ ԳՆ |
| Գնման տեսակ | goods |
| Փոխարժեք | USD 8 RUR 8 EUR 7 |
| Պատասխաններ և պարզաբանումներ | Հարցում / Ժամանակ / Պատասխան / Պարզաբանում / Պահիվ |
| Հրապարակման ժամանակ | 2017-12-22 05:22:27 |
| Հայտերի ընդունման վերջնաժամկետ | 2018-01-03 00:00:00 |
| Հակադարձ աճուրդ | 2018-01-05 00:00:00 |
| Կարգավիճակ | Հրապարակված |
| Հրավեր | Բեռնել |
| Արձանագրություն | |

| Համար | cpv | Վերնագիր | քանակ | Տեխնիկական առաջարկ |
|---|---|---|---|---|
| 1 | 33651188/2 | արմենիկում | 10 | լաբորատոր հետազոտված դեղամիջոց |

Չափաբաժինների ընտրման փուլի ավարտից սկսած ցանկացած պահի Դուք կարող եք չեղարկել Ձեր հայտը (եթե նույնիսկ այն կիսատ է), եթե մանրամասների էջի համապատասխան տողում նշված հայտերի ընդունման վերջնաժամկետը դեռ չի լրացել:
Չեղարկման համար պետք է սեղմել մանրամասների էջի վերին աջ անկյունի «Խմբագրել» կոճակը և բացված էջում չեղարկել հայտը*:




* Դուք կարող եք չեղարկել հայտը ոչ միայն դրանից հրաժարվելու, այլև՝ ուղարկված հայտում փոփոխություններ անելու և մրցույթին կրկին դիմելու նպատակով: Դրա համար չեղարկելուց հետո անհրաժեշտ է մանրամասների էջում սեղմել «Դիմել» կոճակը, և համակարգը կուղղորդի դեպի չափաբաժինների ընտրման սկզբնական փուլ, որտեղից պետք է անցնել գործընթացը սկզբից:

Հայտի չեղարկումից հետո համակարգն ավտոմատ կերպով կուղղորդի դեպի մրցույթի մանրամասների էջ, որտեղից կարող եք կրկին դիմել մրցույթին






Հայտերի ընդունման ժամկետը լրացած մրցույթների կարգավիճակը ինքնաշխատ եղանակով փոխվում է, և մրցույթը ստանում է «Նախաաճուրդային» կարգավիճակ




Առցանց աճուրդի ժամանակացույցին ծանոթանալու համար պետք է սեղմել մրցույթի մանրամասների էջի «Աճուրդ» կոճակը:



Սահմանված ժամկետի լրանալուց հետո ինքնաշխատ եղանակով կբացվի առցանց աճուրդի էջը, որտեղ կարող եք կատարել գնառաջարկներ Ձեր դիմած չափաբաժինների համար *




* Միաժամանակ կարող է ընթանալ մինչև վեց չափաբաժնի առցանց աճուրդ: Ձեր էկրանին կարտացոլվեն այդ վեցյակից այն չափաբաժինները, որոնց Դուք դիմել եք մրցույթին հայտ ուղարկելիս:

Գնառաջարկի պատուհանում գինը մուտքագրելուց* և «Ուղարկել» կոճակը սեղմելուց հետո համակարգը հաստատման պատուհանում ներկայացնում է առաջարկված գինը ինքնարժեքով և ընդհանուր գինը՝ ինչպես թվերով, այնպես էլ տառերով:




* Առցանց աճուրդում գնառաջարկները ներկայացվում են ինքնարժեքով:

Համակարգը պատուհանի ներքևի հատվածում  ներկայացնում է, թե առավելագույնը որքան պետք է կազմի Ձեր կողմից առաջարկվող գինը: Այդ պայմանին չբավարարող գնառաջարկի դեպքում կտեսնեք համապատասխան հաղորդագրություն






Մյուս մասնակիցների գնառաջարկներն ինքնաշխատ եղանակով արտացոլվում են Ձեր էկրանին: Նոր գնառաջարկ անելու համար Դուք ունեք 5 րոպե ժամանակ ,որտեղ՝ վայրկյանացույցում տեսանելի է 5 վայրկյանը մեկ անգամ ավտոմատ թարմացման արդյունքում մնացած ժամանակահատվածը: Չափաբաժնի համար ամեն նոր գնառաջարկից հետո այդ չափաբաժնի համար նախատեսված քայլ կատարելու ժամանակը թարմացվում է: 5 րոպե անգործությունից հետո, եթե ոչ մի մասնակից գնառաջարկ չի ներկայացրել, ապա այդ չափաբաժնի մասով աճուրդն ավարտվում է




Ուշադրություն: Վերջին վայրկյաններին գնառաջարկ մի՛ արեք, Տեխնիկական պատճառներով հնարավոր է, որ Ձեր գնառաջարկը չհասցնի ընդունվել:

Աճուրդի անցկացման տևողությունը կազմում է 30 րոպե: Եթե բոլոր չափաբաժինների համար աճուրդը ավարտվել է անգործության ժամկետի լրանալուց հետո, միևնույն է չափաբաժինների հաջորդ խմբի աճուրդը կմեկնարկի միայն 30 րոպեի լրանալուց հետո: Եթե չափաբաժինների քանակը չի սպառվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ապա մյուս չափաբաժինների համար աճուրդ կազմակերպվում է հաջորդ աշխատանքային օրը




Աճուրդի ավարտից հետո մրցույթի մանրամասների էջ անցնելու համար պետք է սեղմել «Մանրամասներ» կոճակը:



Առցանց աճուրդի ավարտից հետո մրցույթի գնահատող հանձնաժողովը գնահատում է մասնակիցների Դիմում-Հայտարարությունները: Այն մասնակիցը, ում դիմումում նկատվել են թերություններ, ստանում է ծանուցում, ուր նկարագրվում են անճշտությունները և առաջարկվում է ուղարկել Դիմում-Հայտարարության շտկված տարբերակը: Դիմում-Հայտարարությունը շտկելու համար պետք է մուտք գործել մրցույթի մանրամասների էջ և վերևի աջ անկյունում սեղմել «Դիմում-Հայտարարության շտկում» կոճակը:






«Հավաստման շտկում» էջում մասնակիցը կցում է շտկված փաստաթուղթը ինչպես նաև անհրաժեշտության դեպքում հնարավորություն ունի շտկել տեխնիկական բնութագիրը, մակնիշը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ֆիրմայի անվանումը «Տեխնիկական բնութագիր», «Մակնիշ», «Ապրանքային նշան», «Արտադրողի անվանում», «Ֆիրմայի անվանում» դաշտերի՝ հայերեն կամ ռուսերեն դաշտերում և սեղմում է «պահել» կոճակը: Արդյունքում տեսանելի կլինի կատարված շտկման վերջին տարբերակը:




* Անբավարար գնահատման, ինչպես նաև՝ շտկված փաստաթուղթ չուղարկելու դեպքում մասնակցի հայտը հանձնաժողովի կողմից մերժվում է

Պայմանագրի շնորհման փուլին անցնելու համար օգտատերը պետք է մուտք գործի մրցույթի մանրամասների էջ, որի «Շնորհում» աղյուսակում չափաբաժիններով խմբավորված պայմանագրերն են: Յուրաքանչյուր պայմանագրի շնորհման էջ մուտք գործելու համար պետք է սեղմել դրա տողի աջ անկյունում գտնվող մանրամասների կոճակը

| Շնորհում | | | |
|---|---|---|---|
| Հ/հ | Չափաբաժիններ | Խումբ | |
| 6 | 1 2 | 1 | > |

«Շնորհում» էջի վերին հատվածում մրցույթի մասին հիմնական տեղեկատվությունն է: «Պայմանագիր» տողից կարելի է բեռնել համակարգի կողմից ինքնաշխատ գեներացված պայմանագրի նախագծերը (հայերենով, ռուսերենով):



Էջի ներքևի հատվածի «Հաղորդագրություն» դաշտում պայմանագրի կնքման առաջարկ ստացած մասնակցի օգտատերը կարող է ուղարկել հարցումներ և առաջարկներ պայմանագրի վերաբերյալ, որոնց, նույն դաշտի միջոցով պատասխանում է հանձնաժողովի քարտուղարը: Հաղորդագրության ուղարկման համար պետք է սեղմել «Ուղարկել» կոճակը: Բոլոր հաղորդագրություններն արտացոլվում են «Հաղորդագրություններ» տողում:



Մասնակցի օգտատիրոջ* կողմից ստորագրված պայմանագրի կցումից հետո այն հասանելի է դառնում «Շնորհում» էջի համապատասխան տողում: Այն բեռնելուց հետո քարտուղարը օրենքով սահմանված ժամկետում պետք է կցի պայմանագրի՝ Պատվիրատուի կողմից ստորագրված տարբերակը:



| | |
|---|---|
| Ստորագրված պայմանագիր | Բեռնել |
| Վերջնական պայմանագիր | Բեռնել |
| Հաղորդագրություններ | 28-12-17 23:52<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>jbjkgkgj<br><br>28-12-17 23:55<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>dfsdfds |

Պայմանագրի՝ Պատվիրատուի կողմից ստորագրված տարբերակի կցումից հետո այն հայտնվում է <<Վերջնական Պայմանագիր>> տողում: Պայմանագրի երկկողմանի ստորագրումից հետո օգտատերերն այլևս չունեն հաղորդագրություններ ուղարկելու հնարավորություն:

Որպես հյուր-մասնակից կարող եք օգտվել այս հղումից՝ https://eauction.armeps.am/hy/public/tender/